

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« »

2022թ.

N -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Երևան համայնքում (այսուհետ՝ Երևան) տեղական տուրքերի 2023 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ.

1) տեղական տուրք վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով).

2) Երևանի կողմից մատուցվող ծառայությունների (թույլտվությունների տրամադրման) համար տեղական տուրքը գանձվում է նախքան սույն որոշմամբ սահմանված գործողությունների կատարումը (վավերացումը) և (կամ) թույլտվությունների տրամադրումը կամ համայնքային ծառայությունների մատուցումը.

3) սույն որոշմամբ սահմանված թույլտվությունների տրամադրումը կամ գործողությունների կատարումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դրանց տրամադրման համար նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու և (կամ) տեղական տուրքի գումարը չվճարելու դեպքում.

3. Երևանի քաղաքապետին՝ ապահովել տեղական տուրքերի դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական տուրքերի յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև Երևանի ավագանու սահմանած արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումն Երևանի պաշտոնական համացանցային www.yerevan.am կայքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱԶՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

1) հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 105000 /մեկ հարյուր հինգ հազար/ դրամ,

2) սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

ա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 210000 /երկու հարյուր տասը հազար/ դրամ,

բ. 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ դրամ,

գ. 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ դրամ,

դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 700000 /յոթ հարյուր հազար/ դրամ.

3) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 21000 /քսանմեկ հազար/ դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 35000 /երեսունհինգ հազար/ դրամ:

2. Երևանի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է 21000 /քսանմեկ հազար/ դրամ:

3. Երևանի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվում է 35000 /երեսունհինգ հազար/ դրամ:

4. Երևանի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տեղական տուրքը սահմանվում է 600000 /վեց հարյուր հազար/ դրամ:

5. Երևանի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տեղական տուրքը սահմանվում է 600000 /վեց հարյուր հազար/ դրամ:

6. Երևանի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տեղական տուրքը սահմանվում է 600000 /վեց հարյուր հազար/ դրամ:

7. Երևանի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է 87500 /ութսունյոթ հազար հինգ հարյուր/ դրամ:

8. Երևանի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առ ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է 50000 /հիսուն հազար/ դրամ:

9. Երևանի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար ըստ գոտիավորման տեղական տուրքը սահմանվում է համաձայն **N 1 աղյուսակի**:

10. Երևանի վարչական տարածքում օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար ըստ գոտիավորման տեղական տուրքը սահմանվում է համաձայն **N2 աղյուսակի**:

11. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևանի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար տեղական տուրքը սահմանվում է 500 /հինգ հարյուր/ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

12. Երևանի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է՝

- 1) առևտրի օբյեկտների համար՝ 120000 /մեկ հարյուր քսան հազար/ դրամ,
- 2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ,
- 3) բաղնիքների (սաունաների) համար՝ 1400000 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/ դրամ,
- 4) խաղատների համար՝ 3000000 /երեք միլիոն/ դրամ,
- 5) շահումով խաղերի համար՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ,
- 6) վիճակախաղերի համար՝ 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ դրամ:

13. Երևանի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, սահմանվում է համաձայն **N 3 աղյուսակի**:

14. Երևանի վարչական տարածքում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը՝ յուրաքանչյուր տնային կենդանի պահելու համար, սահմանվում է 5000 /հինգ հազար/ դրամ:

15. Երևանի ավագանու սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար (բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների) յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը, ըստ գոտիավորման, սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 6000 /վեց հազար/ դրամ,

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 10500 /տասը հազար հինգ հարյուր/ դրամ,

3) այլ արտաքին գովազդի համար՝ 4500 /չորս հազար հինգ հարյուր/ դրամ,

4) էլեկտրոնային էկրանների վրա տեղադրվող արտաքին գովազդի համար՝ 4500 /չորս հազար հինգ հարյուր/ դրամ,

5) սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո/ դրամ.

6) դատարկ գովազդային վահանակների համար՝ Երևանի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամիս սահմանված տուրքի 25 %-ի չափով:

7) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ Երևանի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամիս սահմանված տուրքի 10 %-ի չափով:

16. Երևանի կամ վարչական շրջանների խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է 300000 /երեք հարյուր հազար/ դրամ:

17. Երևանի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար տեղական տուրքը սահմանվում է 10000 /տասը հազար/ դրամ:

18. Երևանի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ:

19. Երևանի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է՝

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 /հինգ միլիոն/ դրամ:

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 /տասը միլիոն/ դրամ:

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 14000000 /տասնչորս միլիոն/ դրամ:

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 20000000 /քսան միլիոն/ դրամ:

20. Երևանի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է 300000 /երեք հարյուր հազար/ դրամ:

21. Երևանի վարչական տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

1) «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված՝ կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, շոգեբաղնիքի, սաունայի և մերսման սրահի (բացառությամբ բուժական մերսման սրահների) համար՝ օրացուցային տարվա համար՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ,

2) հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ:

22. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևանի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամսվա համար տեղական տուրքը սահմանվում է 50000 /հիսուն հազար/ դրամ:

23. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևանի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ շրջածախ առևտրի իրականացման թույլտվության համար՝ մեկ անձի համար՝ օրական 500 /հինգ հարյուր/ դրամ:

24. Երևանի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) սեզոնին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը՝ մեկ քառակուսի մետրի համար, սահմանվում է 30000 /երեսուն հազար/ դրամ:

25. Երևանի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոնին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը՝ մեկ քառակուսի մետրի համար, սահմանվում է 30000 /երեսուն հազար/ դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետին համապատասխան՝ Երևանի բյուջեի ձևավորման աղբյուր են հանդիսանում նաև տեղական տուրքերը /օրենքի նշված դրույթը ամրագրված է նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28.1-րդ հոդվածում/: Նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասին, 11-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ տեղական տուրքերը համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ: Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև կիրառելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով արմագրված՝ տարբեր տուրքերի համար գոտիավորման սկզբունքը՝ որոշման նախագծով սահմանվել են Երևան համայնքում տեղական տուրքերի 2022 թվականի դրույթաչափերը:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված են, ըստ տուրքերի տեսակների, տուրքերի նվազագույն և առավելագույն դրույթաչափերը:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

– Նշված հոդվածով սահմանված դրույթաչափերը քաղաքային բնակավայրերում համայնքի ավագանու որոշմամբ կարող են սահմանվել 1.5 անգամ, իսկ Երևան քաղաքում՝ 3.0 անգամ ավելի, բացառությամբ 1-ին մասի 1-3-րդ կետերի:

– Նշված հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված դրույթաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային համայնքներում կարող են հաշվարկվել 0.3, գյուղական այլ բնակավայրերում՝ 0.5, քաղաքային այլ բնակավայրերում՝ 1.0-3.0, իսկ Երևան քաղաքում՝ 1.0-7.0 գործակիցների կիրառմամբ:

– Նշված հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դրույթաչափը Երևան քաղաքում՝ ավագանու որոշմամբ, ըստ գոտիավորման, կարող է սահմանվել մինչև 5.0 անգամ, իսկ «բ» ենթակետով սահմանված դրույթաչափը՝ մինչև 10.0 անգամ ավելի:

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչպես նաև Երևան համայնքի համաչափ զարգացման սկզբունքը, սահմանվել է գոտիավորում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների

ու ծխախոտի արտադրանքի վաճառքի, արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տալու ու Երևան քաղաքի վարչական տարածքում հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար, նախատեսված տեղական տուրքերի մասով:

Նախագծում հաշվի են առնվել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության դրույքաչափեր

1. Երևանի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է.

գոտի	մինչև 26 քմ.	26-ից մինչև 50 քմ.	50-ից մինչև 100 քմ.	100-ից մինչև 200 քմ.	200-ից մինչև 500 քմ.	500 և ավելի քմ.
1-ին	17,500	22,750	35,000	43,750	78,750	175,000
1-ին բակային	14,000	18,200	28,000	35,000	63,000	140,000
2-րդ	10,500	13,650	21,000	26,250	47,250	105,000
2-րդ բակային	8,225	10,692	16,450	20,562	37,012	82,250
3-րդ	6,825	8,872	13,650	17,062	30,712	68,250
4-րդ	4,200	5,460	8,400	10,500	18,900	42,000

2. Սույն հավելվածի իմաստով գոտիները ներառում են հետևյալ փողոցները և տարածքները.

1-ին գոտի

վարչական շրջան	փողոցի և տարածքի անվանում
Կենտրոն	Աբովյան փողոց
Կենտրոն	Ագաթանգեղոսի փողոց
Կենտրոն	Ալեք Մանուկյան փողոց
Կենտրոն	Ամիրյան փողոց
Կենտրոն	Արգիշտի փողոց
Կենտրոն	Բայրոնի փողոց
Կենտրոն	Բուզանդի փողոց
Կենտրոն	Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց
Կենտրոն	Եզնիկ Կողբացու փողոց
Կենտրոն	Երվանդ Քոչարի փողոց
Կենտրոն	Զաքյան փողոց
Կենտրոն	Թումանյան փողոց
Կենտրոն	Թամանյան փողոց
Կենտրոն	Իսահակյան փողոց
Կենտրոն	Իտալիայի փողոց
Կենտրոն	Լեոյի փողոց
Կենտրոն	Խանջյան փողոց
Կենտրոն	Խորենացի փողոց (Սարյան փողոցից մինչև Նար-Դոս փողոց)
Կենտրոն	Կորյունի փողոց
Կենտրոն	Հանրապետության փողոց
Կենտրոն	Հերացու փողոց
Կենտրոն	Հին Երևանցու փողոց
Կենտրոն	Հյուսիսային պողոտա
Կենտրոն	Մարկ Գրիգորյան փողոց
Կենտրոն	Սարյան փողոց
Կենտրոն	Մաշտոցի պողոտա

Կենտրոն	Մարշալ Բաղրամյան պողոտա
Կենտրոն	Մոսկովյան փողոց
Կենտրոն	Նալբանդյան փողոց
Կենտրոն	Նար-Դոսի փողոց
Կենտրոն	Չարենցի փողոց
Կենտրոն	Պարոնյան փողոց
Կենտրոն	Պուշկինի փողոց
Կենտրոն	Սայաթ-Նովայի պողոտա
Կենտրոն	Վազգեն Սարգսյան փողոց
Կենտրոն	Վարդանանց փողոց
Կենտրոն	Տերյան փողոց
Կենտրոն	Տիգրան Մեծի պողոտա (Հանր. հրապարակից մինչև Նար-Դոս փողոց)
Կենտրոն	Տպագրիչների փողոց
Կենտրոն	Արամի փողոց
Կենտրոն	Բեյրութի փողոց
Կենտրոն	Դեղատան փողոց
Կենտրոն	Զորյան փողոց
Կենտրոն	Իսրայելյան փողոց
Կենտրոն	Զորափի փողոց
Կենտրոն	Մելիք-Ադամյան փողոց
Կենտրոն	Շարիմանյան փողոց
Կենտրոն	Ֆիրդուսու փողոց
Կենտրոն	Ավագ Պետրոսյան փողոց
Կենտրոն	Գրիգոր Քոչարի փողոց
Կենտրոն	Միեր Մկրտչյան փողոց
Կենտրոն	Սպենդիարյան փողոց
Կենտրոն	Քաջազնունու փողոց
Կենտրոն	Մյասնիկյան պողոտա
Կենտրոն	Արշակունյաց պողոտա
Կենտրոն	Անտոն Քոչինյան փողոց
Կենտրոն	Ղազար Փարպեցու փողոց
Կենտրոն	Պռոշյան փողոց
Կենտրոն	Անտառային փողոց
Կենտրոն	Օղակաձև զբոսայգի
Կենտրոն	Զարուբյան փողոց
Կենտրոն	Սարմենի փողոց
Կենտրոն	Աղայան փողոց
Կենտրոն	Մակար Եկմալյան փողոց
Արաբկիր	Մարշալ Բաղրամյան պողոտա
Արաբկիր	Կոմիտասի պողոտա
Արաբկիր	Բարեկամության հրապարակ
Արաբկիր	Պռոշյան փողոց
Նոր Նորք	Գայի պողոտա
Նոր Նորք	Մյասնիկյան պողոտա
Շենգավիթ	Ծովակալ Իսակովի պողոտա
Մալաթիա-Սեբաստիա	«Զվարթնոց» օդանավակայան
-	Հրազդանի կիրճ. (ամբողջ երկայնքով մինչև Երևանյան լիճ)

վարչական շրջան	փողոցի և տարածքի անվանում
Աջափնյակ	Աշտարակի խճուղի
Աջափնյակ	Բաշինջաղյան փողոց
Աջափնյակ	Գրիգոր Հասրաթյան փողոց
Աջափնյակ	Լենինգրադյան փողոց
Աջափնյակ	Հալաբյան փողոց
Աջափնյակ	Մազմանյան փողոց
Աջափնյակ	Մարգարյան փողոց
Աջափնյակ	Շինարարների փողոց
Աջափնյակ	Շիրազի փողոց
Աջափնյակ	Ջանիբեկյան փողոց
Աջափնյակ	Սեբաստիայի փողոց
Աջափնյակ	Բեկնազարյան փողոց
Ավան	Աճառյան փողոց
Ավան	Մյասնիկյան պողոտա
Ավան	Մարշալ Բաբաջանյան փողոց
Ավան	Մարշալ Խուռյակովի փողոց
Արաբկիր	Ազատության պողոտա
Արաբկիր	Ձարյան փողոց
Արաբկիր	Կասյան փողոց
Արաբկիր	Կիևյան փողոց
Արաբկիր	Հակոբ Հակոբյան փողոց
Արաբկիր	Հրաչյա Քոչարի փողոց
Արաբկիր	Վահրամ Փափազյան
Արաբկիր	Վաղարշյան փողոց
Արաբկիր	Թբիլիսյան խճուղի
Արաբկիր	Բաբայան փողոց
Դավթաշեն	Անաստաս Միկոյան փողոց
Դավթաշեն	Սասնա Ծռեր փողոց
Դավթաշեն	Տիգրան Պետրոսյան փողոց
Դավթաշեն	Սամվել Գևորգյան փողոց
Դավթաշեն	Աշտարակի խճուղի
Էրեբունի	Ազատամարտիկների պողոտա
Էրեբունի	Աթոյան փողոց
Էրեբունի	Այվազովսկու փողոց
Էրեբունի	Արցախի փողոց
Էրեբունի	Գաջեգործների փողոց
Էրեբունի	Դավիթ-Բեկի փողոց
Էրեբունի	Էրեբունի փողոց
Էրեբունի	Խորենացու փողոց
Էրեբունի	Քրիստափորի փողոց
Էրեբունի	Մուրացանի փողոց
Էրեբունի	Ռոստոմյան փողոց
Էրեբունի	Տիգրան Մեծի պողոտա
Էրեբունի	Տիտոգրադյան փողոց
Էրեբունի	Խաղաղ Դոնի փողոց
Էրեբունի	Բելինսկու փողոց
Էրեբունի	Նուբարաշենի փողոց
Էրեբունի	Սասունցի Դավթի փողոց
Կենտրոն	Բրյուսովի փողոց

Կենտրոն	Դերենիկ Դեմիրճյան փողոց
Կենտրոն	Ծիծեռնակաբերդի խճուղի
Կենտրոն	Ծովակալ Իսակովի պողոտա
Կենտրոն	Սարալանջի փողոց
Կենտրոն	Քրիստափորի փողոց
Կենտրոն	Խորենացու փողոց (Նար-Դոս փողոց դեպի Խորենացու 4-րդ նրբանցք)
Կենտրոն	Տիգրան Մեծի (Նար-Դոս փողոց դեպի Քրիստափորի փողոց)
Կենտրոն	Աթենքի փողոց
Կենտրոն	Լենինգրադյան փողոց
Կենտրոն	Անրի Վերնոյի փողոց
Կենտրոն	Ռաֆայել Լեմկինի փողոց
Կենտրոն	Սիրվա Կապուտիկյան փողոց
Կենտրոն	Հնդկաստանի փողոց
Կենտրոն	Սերգեյ Փարաջանովի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Ա. Բաբաջանյան փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Անդրանիկի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Լենինգրադյան փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Սեբաստիա փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Սվաճյան փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Տիջինայի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Դեֆանս Հաուզինգ թաղամաս
Մալաթիա-Սեբաստիա	Րաֆֆու փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Իսակովի պողոտա
Մալաթիա-Սեբաստիա	Գուսան Շերամի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Մալաթիայի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Օհանովի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Ծիծեռնակաբերդի խճուղի
Մալաթիա-Սեբաստիա	Մոնթե Մելքոնյան փողոց
Նոր Նորք	Թևոսյան փողոց
Նոր Նորք	Ալեքսանդր Միքայելյան փողոց
Նոր Նորք	Բագրևանդի փողոց
Նոր Նորք	Արտ. Միկոյան փողոց
Նոր Նորք	Ս. Սաֆարյան փողոց
Նոր Նորք	Դավիթ-Բեկի փողոց
Նորք-Մարաշ	Արմենակ Արմենակյան փողոց
Նորք-Մարաշ	Դավիթ Բեկի փողոց
Նորք-Մարաշ	Հովսեփյան փողոց
Շենգավիթ	Արշակունյաց պողոտա
Շենգավիթ	Արտաշատի խճուղի
Շենգավիթ	Արտաշեսյան փողոց
Շենգավիթ	Բագրատունյաց փողոց
Շենգավիթ	Գարեգին Նժդեհի փողոց
Շենգավիթ	Մանանդյան փողոց
Շենգավիթ	Մայիսի 9 փողոց
Շենգավիթ	Նորագավիթ 1-ին փողոց
Շենգավիթ	Շիրակի փողոց
Շենգավիթ	Տարոնցու փողոց
Շենգավիթ	Եղբայրության փողոց
Շենգավիթ	Թամանցիների փողոց

Շենգավիթ	Չեխովի փողոց
Շենգավիթ	Քրիստափորի փողոց
Շենգավիթ	Ամերիկյան փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Ազատության պողոտա
Քանաքեռ-Զեյթուն	Դավիթ Անհաղթի փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Թբիլիսյան խճուղի
Քանաքեռ-Զեյթուն	Թբիլիսյան խճուղու նրբանցք
Քանաքեռ-Զեյթուն	Ռուբինյանց փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Սևակի փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Զաքարիա Սարկավազի փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Կարապետ Ուլենցու փողոց

3-րդ գոտի

վարչական շրջան	փողոցի և տարածքի անվանում
Աջափնյակ	Ա. Սարգսյան փողոց
Աջափնյակ	Աբելյան փողոց
Աջափնյակ	Ալիխանյան եղբայրների փողոց
Աջափնյակ	Առաքելյան փողոց
Աջափնյակ	Արզումանյան փողոց
Աջափնյակ	Գևորգ Չավուշի փողոց
Աջափնյակ	Եղիազարյան փողոց
Աջափնյակ	Զոհրապի փողոց
Աջափնյակ	Էստոնական փողոց
Աջափնյակ	Թերլեմեզյան փողոց
Աջափնյակ	Լևոնյան փողոց
Աջափնյակ	Լուկաշինի փողոց
Աջափնյակ	Խ. Խաչատրյան փողոց
Աջափնյակ	Կարապետյան փողոց
Աջափնյակ	Հասմիկի փողոց
Աջափնյակ	Մարտիրոսյան փողոց
Աջափնյակ	Մելքումովի փողոց
Աջափնյակ	Չուխաջյան փողոց
Աջափնյակ	Պարսեղովի փողոց
Աջափնյակ	Ռուստամյան փողոց
Աջափնյակ	Սիլիկյան թաղամաս
Աջափնյակ	Սիսակյան փողոց
Աջափնյակ	Վշտունու փողոց
Ավան	Ա. Շահինյան փողոց
Ավան	Ալմա-Աթայի փողոց
Ավան	Աշխաբադի փողոց
Ավան	Ավանի համարային փողոցներ
Ավան	Դուշանբեի փողոց
Ավան	Թամրուզի փողոց
Ավան	Ծարավ Աղբյուր փողոց
Ավան	Մալյան փողոց
Ավան	Ն. Սաֆարյան փողոց
Ավան	Տաշքենդի փողոց

Ավան	Ջահանգիր աղայի փողոց
Արաբկիր	Վ. Համբարձումյան փողոց
Արաբկիր	Ավ. Ահարոնյան
Արաբկիր	Ա. Ավետիսյան փողոց
Արաբկիր	Ադոնցի փողոց
Արաբկիր	Այգեկցու փողոց
Արաբկիր	Գրիբոեդովի փողոց
Արաբկիր	Մամիկոնյանց փողոց
Արաբկիր	Վրացական փողոց
Արաբկիր	Շիրվանզադեի փողոց
Արաբկիր	Տիգրանյան փողոց
Արաբկիր	Այգեծորի փողոց
Արաբկիր	Արաբկիրի համարային փողոց
Արաբկիր	Արծրունու փողոց
Արաբկիր	Արղության փողոց
Արաբկիր	Բարբյուսի փողոց
Արաբկիր	Բուդաղյան փողոց
Արաբկիր	Բուդապեշտի փողոց
Արաբկիր	Գուլակյան փողոց
Արաբկիր	Սբ. Աբգար թագավորի անվան փողոց
Արաբկիր	Երզնկյան փողոց
Արաբկիր	Թավրիզյան փողոց
Արաբկիր	Խնկո-Ապոր փողոց
Արաբկիր	Ա. Խաչատրյան փողոց
Արաբկիր	Ղափանցյան փողոց
Արաբկիր	Մալխասյանց փողոց
Արաբկիր	Մանուշյան փողոց
Արաբկիր	Ն. Տիգրանյան փողոց
Արաբկիր	Շահսուվարյան փողոց
Արաբկիր	Ջեյմս Բրայսի փողոց
Արաբկիր	Ռիգայի փողոց
Արաբկիր	Սևաստոպոլյան փողոց
Արաբկիր	Սեպուհի փողոց
Արաբկիր	Սոսեի փողոց
Արաբկիր	Սունդուկյան փողոց
Արաբկիր	Սևքարեցի Սաքոյի փողոց
Արաբկիր	Վահագն Դավթյան փողոց
Արաբկիր	Տոլբուխինի փողոց
Արաբկիր	Քեռու փողոց
Արաբկիր	Օրբելի եղբայրների փողոց
Արաբկիր	Գյուլբենկյան փողոց
Արաբկիր	Հայրիկ Մուրադյան փողոց
Արաբկիր	Ռուբեն Սևակի փողոց
Դավթաշեն	Հույսի ավան
Դավթաշեն	Դավթաշեն համարային փողոց
Դավթաշեն	Փիրումյանների փողոց
Դավթաշեն	Աղաբաբյան փողոց
Դավթաշեն	Մելքումով փողոց
Դավթաշեն	Անդրանիկ Իոսիֆյան փողոց
Էրեբունի	Արցախ թաղամաս

Էրեբունի	Աճեմյան փողոց
Էրեբունի	Ավանեսովի փողոց
Էրեբունի	Արին-Բերդի փողոց
Էրեբունի	Բեռնակիրների փողոց
Էրեբունի	Բուռնազյան փողոց
Էրեբունի	Գլինկայի փողոց
Էրեբունի	Դաշտենցի փողոց
Էրեբունի	Երկաթուղայինների համարային փողոց
Էրեբունի	Թեյշեբանիի փողոց
Էրեբունի	Թորամանյան փողոց
Էրեբունի	Գրիգոր և Սարգիս Գուրգադյանների փողոց
Էրեբունի	Լոմոնոսովի փողոց
Էրեբունի	Լորիս Մելիքյան փողոց
Էրեբունի	Ծատուրյան փողոց
Էրեբունի	Ծխախոտագործների փողոց
Էրեբունի	Կուստոյի փողոց
Էրեբունի	Կռիլովի փողոց
Էրեբունի	Մահարու փողոց
Էրեբունի	Միշուրինի փողոց
Էրեբունի	Մուշավանի 1-ին փողոց
Էրեբունի	Նոր Արեշ համարային փողոց
Էրեբունի	Նոր Խարբերդ այգ. Տար. Փող
Էրեբունի	Որմնադիրների փողոց
Էրեբունի	Չեռնիշևսկու փողոց
Էրեբունի	Ջրաշենի համարային փողոց
Էրեբունի	Սևանի փողոց
Էրեբունի	Սարի Թաղ թաղ.
Էրեբունի	Սովորովի փողոց
Էրեբունի	Սոֆիայի փողոց
Էրեբունի	Վարդաշենի համարային փողոց
Էրեբունի	Օստրովսկու փողոց
Կենտրոն	Ադանայի փողոց
Կենտրոն	Աղյուսագործների փողոց
Կենտրոն	Ալգեստան
Կենտրոն	Մանուկ Աբեղյան փողոց
Կենտրոն	Նիկոլ Աղբալյան փողոց
Կենտրոն	Թադևոս Ավդալբեկյան փողոց
Կենտրոն	Արմեն Թախտաջյան փողոց
Կենտրոն	Սերգեյ Մերգելյան փողոց
Կենտրոն	Գրիգոր Չուբարյան փողոց
Կենտրոն	Միքայել Չայլախյան փողոց
Կենտրոն	Գևորգ Զահուկյան փողոց
Կենտրոն	Ասրիկի փողոց
Կենտրոն	Արիեստավորների 1-ին փողոց
Կենտրոն	Արիեստավորների 2-րդ փողոց
Կենտրոն	Գ. Տեր-Գրիգորյան փողոց
Կենտրոն	Գետառի փողոց
Կենտրոն	Գևորգ Էմինի փողոց
Կենտրոն	Գրողների փողոց
Կենտրոն	Զավարյան փողոց

Կենտրոն	Զարոբյան փողոց
Կենտրոն	Ի. Ալիխանյան փողոց
Կենտրոն	Լեռ Կամսարի փողոց
Կենտրոն	Ծխախոտագործների փողոց
Կենտրոն	Կարեն Դեմիրճյան պողոտա
Կենտրոն	Կորի փողոց
Կենտրոն	Հ. Շահինյան փողոց
Կենտրոն	Հովհաննես Կոզեռնի փողոց
Կենտրոն	Ձորագյուղ ազգագրական թաղ.
Կենտրոն	Խորեն Աբրահամյան փողոց
Կենտրոն	Մարտի 8-ի փողոց
Կենտրոն	Շարա Տալյան փողոց
Կենտրոն	Չայկովսկու փողոց
Կենտրոն	Սիմեոն Երևանցու փողոց
Կենտրոն	Սուրբ Հովհաննեսի փողոց
Կենտրոն	Սուրենյանց փողոց
Կենտրոն	Տոլստոյի փողոց
Կենտրոն	Օմար Խայամի փողոց
Կենտրոն	Ֆիզկուլտուրնիկների փողոց
Կենտրոն	Ֆրիկի փողոց
Կենտրոն	Լեռնիդ Ազգալոյան փողոց
Կենտրոն	Կոնստանտին Օրբելյան փողոց
Կենտրոն	Ալեքսանդր Հարությունյան փողոց
Կենտրոն	Էդվարդ Միրզոյան փողոց
Կենտրոն	Արտեմի Այվազյան փողոց
Կենտրոն	Էդգար Հովհաննիսյան
Կենտրոն	Գոհար Գասպարյան փողոց
Կենտրոն	Գալոյան եղբայրների փողոց
Կենտրոն	Վանի 1915 թվականի հերոսամարտի փողոց
Կենտրոն	Ոսկերիչների փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Արմին Վեգների փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Բատիկյան փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Գ. Ջոհրապի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Գազարինի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Դուրյան փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Իսրայել Օրու փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Ծերենցի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Կուրդինյան փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Հովնաթանի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Մամիկոնյան փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Մանուկյան փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Մարտիկյան փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Մեծարենցի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Միքայելյան փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Շրջանային փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Ոսկանյան փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Ջիվանու փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Վանթյան փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Վարուժանի փողոց
Մալաթիա-Սեբաստիա	Տիտովի փողոց

Մալաթիա-Սերաստիա	Քեսաբցիների փողոց
Մալաթիա-Սերաստիա	Օտյան փողոց
Նոր Նորք	Ա. Հովհաննիսյան փողոց
Նոր Նորք	Բաղալ Մուրադյան փողոց
Նոր Նորք	Բակունցի փողոց
Նոր Նորք	Բաղյան փողոց
Նոր Նորք	Բորյան փողոց
Նոր Նորք	Գալշոյան փողոց
Նոր Նորք	Գյուլիքևիսյան փողոց
Նոր Նորք	Գյուրջյան փողոց
Նոր Նորք	Դ. Մայրան փողոց
Նոր Նորք	Թոթովենցի փողոց
Նոր Նորք	Լվովյան փողոց
Նոր Նորք	Կարախանյան փողոց
Նոր Նորք	Հ. Ավետիսյան փողոց
Նոր Նորք	Մառի փողոց
Նոր Նորք	Մինսկի փողոց
Նոր Նորք	Մուղովական փողոց
Նոր Նորք	Նանսենի փողոց
Նոր Նորք	Ն. Ստեփանյան
Նոր Նորք	Ջուղայի փողոց
Նոր Նորք	Ս. Քոչարյան փողոց
Նոր Նորք	Վախթանգովի փողոց
Նոր Նորք	Վիլնյուսի փողոց
Նոր Նորք	Շոպրոնի փողոց
Նորք-Մարաշ	Նորք Մարաշի համարային փողոց
Նորք-Մարաշ	Խանզադյան փողոց
Նորք-Մարաշ	Նորքի փողոց
Նորք-Մարաշ	Նորքի 2-րդ փողոց
Նուբարաշեն	Նուբարաշենի խճուղի
Շենգավիթ	Շարուրի փողոց
Շենգավիթ	Բորիս Պիտրոբսկու փողոց
Շենգավիթ	Արագածի փողոց
Շենգավիթ	Արարատյան փողոց
Շենգավիթ	Հ. Հովհաննիսյան փողոց
Շենգավիթ	Մանթաշյան փողոց
Շենգավիթ	Ֆրունզեի փողոց
Շենգավիթ	Գորգագործների փողոց
Շենգավիթ	Գործարանային փողոց
Շենգավիթ	Դողդիսյան փողոց
Շենգավիթ	Եսայան փողոց
Շենգավիթ	Թադևոսյան փողոց
Շենգավիթ	Թաթիկ Սարյան փողոց
Շենգավիթ	Լ. Խաչիկյան փողոց
Շենգավիթ	Լազոյի փողոց
Շենգավիթ	Կաշեգործների փողոց
Շենգավիթ	Կարա-Մուրզայի փողոց
Շենգավիթ	Կարմի Բլուրի փողոց
Շենգավիթ	Կողբի 1-ին փողոց
Շենգավիթ	Կողբի 2-րդ փողոց

Շենգավիթ	Կոտովսկու փողոց
Շենգավիթ	Նիկողայոս Բունիաթյան փողոց
Շենգավիթ	Հ. Հովսեփյան փողոց
Շենգավիթ	Հրազդանի փողոց
Շենգավիթ	Ղարիբջանյան փողոց
Շենգավիթ	Մադոյան փողոց
Շենգավիթ	Մասիսի փողոց
Շենգավիթ	Մարկվարտի փողոց
Շենգավիթ	Մխչյան փողոց
Շենգավիթ	Մուսայելյան փողոց
Շենգավիթ	Ն. Չարբախ համարային փողոց
Շենգավիթ	Նիգամու փողոց
Շենգավիթ	Հրանտ Վարդանյան փողոց
Շենգավիթ	Շևչենկոյի փողոց
Շենգավիթ	Չնքուշի փողոց
Շենգավիթ	Պատկանյան փողոց
Շենգավիթ	Պոպովի փողոց
Շենգավիթ	Ս. Սարգսյան փողոց
Շենգավիթ	Սմբատ Ջորավարի փողոց
Շենգավիթ	Տիմիրյազևի փողոց
Շենգավիթ	Տրանսպորտայինների փողոց
Շենգավիթ	Օդեսայի փողոց
Շենգավիթ	Ոսկերիչների փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Ահարոնյան փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Լեփսիուսի փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Քանաքեռի համարային փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Էմինեսկու փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Հասրաթյան փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Հրաչյա Ներսիսյան փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Լևոն Ներսիսյան փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Ֆանարջյան փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Ա. Տիգրանյան փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Աղասու փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Բուսաբանական փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Գերցենի փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Գոգոլի փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Դրոյի փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Զեյթունի 10-րդ փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Զեյթունի 5ա փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Ծարավ Աղբյուրի փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Կամարակի փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Կամարակի 16-րդ փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Դելլալյան փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Մ. Ավետիսյան համարային փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Մ. Մելիքյան փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Յաղուբյան փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Նորաշխարհյան փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Շովրոյան փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Չոլաքյան փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Ռայնիսի փողոց

Քանաքեռ-Զեյթուն	Վահե Վահյան փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Վարչապետի փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Վրթ. Փափազյան փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Տոնյան փողոց
Քանաքեռ-Զեյթուն	Ուսուր Բեկ Թեմուրյան փողոց

4-րդ գոտի

Սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ գոտիներում չներառված փողոցներն ու տարածքները:

Երևանի վարչական տարածքում օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության դրույքաչափեր

1. Երևանի վարչական տարածքում օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է.

Գոտի	մինչև 26 քմ.	26-ից մինչև 50 քմ.	50-ից մինչև 100 քմ.	100-ից մինչև 200 քմ.	200-ից մինչև 500 քմ.	500 և ավելի քմ.
1-ին	17,500	22,750	35,000	43,750	78,750	175,000
1-ին բակային	14,000	18,200	28,000	35,000	63,000	140,000
2-րդ	10,500	13,650	21,000	26,250	47,250	105,000
2-րդ բակային	8,225	10,692	16,450	20,562	37,012	82,250
3-րդ	6,825	8,872	13,650	17,062	30,712	68,250
4-րդ	4,200	5,460	8,400	10,500	18,900	42,000

2. Սույն հավելվածի իմաստով գոտիները ներառում են հետևյալ փողոցները և տարածքները.

1-ին գոտի

վարչական շրջան	փողոցի և տարածքի անվանում
Կենտրոն	Աբովյան փողոց
Կենտրոն	Ագաթանգեղոսի փողոց
Կենտրոն	Ալեք Մանուկյան փողոց
Կենտրոն	Ամիրջյան փողոց
Կենտրոն	Արգիշտի փողոց
Կենտրոն	Բայրոնի փողոց
Կենտրոն	Բուզանդի փողոց
Կենտրոն	Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց
Կենտրոն	Եզնիկ Կողբացու փողոց
Կենտրոն	Երվանդ Քոչարի փողոց
Կենտրոն	Զաքյան փողոց
Կենտրոն	Թումանյան փողոց
Կենտրոն	Թամանյան փողոց
Կենտրոն	Իսահակյան փողոց
Կենտրոն	Իտալիայի փողոց
Կենտրոն	Լեոյի փողոց
Կենտրոն	Իսանջյան փողոց
Կենտրոն	Խորենացի փողոց (Սարյան փողոցից մինչև Նար-Դոս փողոց)
Կենտրոն	Կորյունի փողոց
Կենտրոն	Հանրապետության փողոց
Կենտրոն	Հերացու փողոց

Կենտրոն	Հին Երևանցու փողոց
Կենտրոն	Հյուսիսային պողոտա
Կենտրոն	Մարկ Գրիգորյան փողոց
Կենտրոն	Սարյան փողոց
Կենտրոն	Մաշտոցի պողոտա
Կենտրոն	Մարշալ Բաղրամյան պողոտա
Կենտրոն	Մոսկովյան փողոց
Կենտրոն	Նալբանդյան փողոց
Կենտրոն	Նար-Դոսի փողոց
Կենտրոն	Չարենցի փողոց
Կենտրոն	Պարոնյան փողոց
Կենտրոն	Պուշկինի փողոց
Կենտրոն	Սայաթ-Նովայի պողոտա
Կենտրոն	Վազգեն Սարգսյան փողոց
Կենտրոն	Վարդանանց փողոց
Կենտրոն	Տերյան փողոց
Կենտրոն	Տիգրան Մեծի պողոտա (Հանր. հրապարակից մինչև Նար-Դոս փողոց)
Կենտրոն	Տպագրիչների փողոց
Կենտրոն	Արամի փողոց
Կենտրոն	Բեյրութի փողոց
Կենտրոն	Դեղատան փողոց
Կենտրոն	Զորյան փողոց
Կենտրոն	Իսրայելյան փողոց
Կենտրոն	Զորափի փողոց
Կենտրոն	Մելիք-Ադամյան փողոց
